

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.02.2021թ. թիվ 2112288690 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու, իսկ 16.02.2021թ. թիվ 2112288689 որոշումն անփոփոխ թողնելու մասին

<<9>> 03 2021թ. 7-13- 3312

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Տարոն Ղազարյանի ՄԴ/16079-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղի 2 փողոցի 3 փակուղու 3 տան բնակիչ Տարոն Ղազարյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112288690 և թիվ 2112288689 որոշումներից մեկը՝ նշելով, որ նույն իրավախախտման համար կայացվել է 2 որոշում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության 16.02.2021թ. թիվ 2112288690 որոշումը ենթակա է բեկանման, իսկ 16.02.2021թ. թիվ 2112288689 որոշումը կատարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հադվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ: Իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում, իսկ կասկածի դեպքում մեկնաբանվում է իր օգուտ անձի:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.02.2021թ. թիվ 2112288690 որոշման հիմքում դրված տեսանյութը համադրելով 16.02.2021թ. թիվ 2112288689 որոշման հիմքում դրված տեսանյութի հետ պարզվում է, որ այդ որոշումները կայացվել են նույն իրավախախտման համար:

Այսպիսով, ակնհայտ է, որ նույն իրավախախտման համար կայացվել է երկու որոշում, ուստի 16.02.2021թ. թիվ 2112288690 որոշումը ենթակա է բեկանման, քանի որ այն հանդիսանում է տեխնիկական վրիպակի արդյունք:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.02.2021թ. թիվ 2112288690 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.02.2021թ. թիվ 2112288689 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ դրան վերաբերող մասով, առանց բավարարման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Տարոն Ղազարյանին:



**Ե. Կարապետյան**